

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Բաց Բաժնետիրական Ընկերություն

ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ

araratbank@araratbank.am

Հաշվետվություն թիվ 1, 20.01.2026թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 16.01.2026թ. որոշում (որոշում **ՈՐԽ0102-02/01Լ**)
Գյումրի մասնաճյուղի գործունեությունն իրականացնել նոր վարձակալված տարածքում
և մասնաճյուղի կանոնադրությունում փոփոխություն կատարելու մասին:

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102-02/01Լ

Դաս: ԾԳ

«16» հունվարի 2026թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԳՅՈՒՄՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21⁶-ի 1-ին մասի ժդ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1 կետի ժդ) ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ անհրաժեշտություն է առաջացել Բանկի Գյումրի մասնաճյուղի գործունեությունն իրականացնել նոր վարձակալված տարածքում՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Բանկի Խորհրդի 2007 թվականի հունիսի 22-ի թիվ 06 որոշմամբ հաստատված և Բանկի Խորհրդի 2019 թվականի ապրիլի 29-ի թիվ 07/02Լ որոշմամբ փոփոխված Գյումրի մասնաճյուղի կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Հանձնարարել Բանկի Գործադիր տնօրեն Միեր Անանյանին ապահովել «Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Գ. Նժդեհի փողոց 10 (տասը) շենք, 44 (քառասունչորս) առևտրի և սպասարկման օբյեկտ, «Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Գ. Նժդեհի փողոց 10 (տասը) շենք, 44/1 (քառասունչորս կոտորակ մեկ) նկուղ» հասցեում բանկային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում Բանկի Գյումրի մասնաճյուղի նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության գրանցման հետ կապված գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝

Գ. Հովհաննիսյան



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

**22 հունիսի 2007թ.-ի
թիվ 06 որոշմամբ**

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Մ. Գալստյան

Փոփոխված է

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ

29 ապրիլ 2019թ.-ի թիվ 07/02Լ որոշմամբ

Փոփոխված է

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ

**16 հունվարի 2026թ.-ի թիվ 02/01Լ
որոշմամբ**

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. Հովհաննիսյան



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՄՐԻ

Մ Ա Ս Ն Ա Ճ Յ ՈՒ Ղ

(նոր խմբագրություն)

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) Գյումրի մասնաճյուղը (այսուհետ՝ Մասնաճյուղ) ստեղծվել է Բանկի խորհրդի 22 հունիսի 2007թ.-ի թիվ 06 որոշմամբ և հանդիսանում է Բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող, առանձնացված ստորաբաժանում:

1.2. Մասնաճյուղն իրավունք ունի իրականացնել սույն կանոնադրությամբ սահմանված բանկային գործունեությունը և ֆինանսական գործառնությունները ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից:

1.3. Մասնաճյուղը գործում է Բանկի կողմից սույն կանոնադրությամբ տրված լիազորությունների սահմաններում ու նրա անունից իրականացնում է բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ:

1.4. Մասնաճյուղն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով, ՀՀ կենտրոնական բանկի և այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությունով, Բանկի խորհրդի և վարչության որոշումներով, Բանկի գործադիր տնօրեն-Վարչության նախագահի (այսուհետ՝ Գործադիր տնօրեն) հրամաններով ու կարգադրություններով, Բանկի ներքին իրավական այլ ակտերով:

1.5. Մասնաճյուղն ապահովում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և դրա հիման վրա ՀՀ կենտրոնական բանկի ու Բանկի ընդունած իրավական ակտերի պահանջների կատարումը:

1.6. Մասնաճյուղն երաշխավորում է իր հաճախորդների բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը՝ օրենքով սահմանված կարգով:

1.7. Բանկն ապահովում է Մասնաճյուղում ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին պատկանող բանկային ավանդների հատուցումն երաշխավորելու մասին ՀՀ օրենքի պահանջների կատարումը:

1.8. Բանկը պատասխանատվություն է կրում Մասնաճյուղի պարտավորությունների համար իրեն պատկանող ամբողջ գույքով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.9. Հաճախորդների՝ Մասնաճյուղում գտնվող դրամական միջոցների (ներառյալ՝ ավանդների) և այլ գույքի վրա կարող է կալանք դրվել և բռնագանձում տարածվել միայն ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.10. Բանկը պատասխանատվություն չի կրում իրավասու մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով Մասնաճյուղում հաճախորդի հաշիվների և այլ գույքի արգելադրման, առգրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

1.11. Մասնաճյուղի լրիվ անվանումն է

հայերեն - ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն Գյումրի մասնաճյուղ

ռուսերեն - Открытое акционерное общество АРАРАТБАНК филиал Гюмри

անգլերեն - ARARATBANK Open Joint Stock Company Gyumri branch

1.12. Մասնաճյուղի կրճատ անվանումն է

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գյումրի մասնաճյուղ

ռուսերեն՝ ОАО АРАРАТБАНК филиал Гюмри

անգլերեն՝ ARARATBANK OJSC Gyumri branch

1.13. Մասնաճյուղի իրավաբանական հասցեն (գտնվելու վայրը)՝

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Գ.Նժդեհի փողոց 10 (տասը) շենք, 44 (քառասունչորս) առևտրի և սպասարկման օբյեկտ, Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Գ.Նժդեհի փողոց 10 (տասը) շենք, 44/1 (քառասունչորս կոտորակ մեկ) նկուղ:

1.14. Մասնաճյուղն ունի իր անվամբ և Բանկի խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմակնիք, համարային կնիքներ, ինչպես նաև ձևաթղթեր:

1.15. Մասնաճյուղն իր գործունեությունն իրականացնում է Բանկի խորհրդի կողմից հաստատված եկամուտների և ծախսերի նախահաշվի հիման վրա:

2. Մասնաճյուղի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունները

2.1. Մասնաճյուղում կատարվող գործարքները Մասնաճյուղի կառավարչի կողմից հաստատվելուց հետո իրական ժամանակի ռեժիմում դիտարկվելու և հսկվելու են Բանկի գլխավոր հաշվապահի (տեղակալի) կողմից:

2.2. Մասնաճյուղն իրավունք ունի Բանկի անունից իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները՝

ա/ ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ.

բ/ տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր.

գ/ բացել և վարել հաշիվներ.

դ/ մատուցել վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.

ե/ վաճառել և սպասարկել վճարային քարտեր.

զ/ գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ.

է/ ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ը/ մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն:

Նշված գործառնությունները Մասնաճյուղը կարող է կատարել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

Նշված գործառնությունները Մասնաճյուղի կողմից իրականացվում են Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

2.3. Յուրաքանչյուր առանձին գործարքի համար Գործադիր տնօրենի գրավոր թույլտվությամբ Մասնաճյուղը կարող է՝

ա/ իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.

բ/ տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ).

գ/ գնել, վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, ճանապարհային չեկեր և այլ գործիքներ, իրականացնել նման այլ գործառնություններ.

դ/ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.

ե/ իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ):

2.4. ՀՀ կենտրոնական բանկի կողմից Բանկին տրված թույլտվությամբ, Մասնաճյուղում, Գործադիր տնօրենի գրավոր թույլտվությամբ, կարող են իրականացվել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով ուղղակիորեն չնախատեսվող այլ գործառնություններ:

2.5. Մասնաճյուղն իրավունք ունի Բանկի անունից իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքել պայմանագրեր սույն կանոնադրության 2.2 կետում նշված ֆինանսական գործառնություններն իրականացնելու համար, իսկ սույն կանոնադրության 2.3 և 2.4 կետերում նշված գործառնությունները՝ Գործադիր տնօրենի գրավոր թույլտվությամբ:

2.6. Մասնաճյուղի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների կանոնակարգերը, տոկոսադրույքները, միջնորդավճարները, դրույքաչափերը, սակագները, փոխարժեքները, վարձավճարները, զեղչերը սահմանվում և (կամ) հաստատվում են Բանկի կառավարման իրավասու մարմինների կողմից:

3. Մասնաճյուղի ռեսուրսային բազան

3.1. Մասնաճյուղի ռեսուրսային բազայի ձևավորման աղբյուրներ են՝

- Ներգրավված ավանդներն ու դեպոզիտները.
- Մասնաճյուղի ընթացիկ շահույթը.
- Բանկի կողմից Մասնաճյուղին տրամադրվող միջոցները:

3.2. Մասնաճյուղի շահույթը բաշխվում է Բանկի շահույթի կազմում՝ Բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ:

4. Մասնաճյուղի կառավարումը

4.1. Բանկի խորհուրդը՝

ա/ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի կազմում հաստատում է Մասնաճյուղի հեռանկարային զարգացման ծրագիրը.

բ/ Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմում նախնական հաստատում է Մասնաճյուղի տարեկան հաշվետվությունները, եկամուտների ու ծախսերի նախահաշվի կատարողականը և տնտեսական գործունեության հաշվետվությունը.

գ/ հաստատում է Մասնաճյուղի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը, աշխատատեղերը (հաստիքացուցակը) և տարեկան եկամուտների ու ծախսերի նախահաշիվը.

դ/ սահմանում է Մասնաճյուղի հաշվետվությունների կազմը, դրանց ներկայացման պարբերականությունը և գործունեության արդյունքների գնահատման կարգը.

ե/ սահմանում է Մասնաճյուղի կողմից տրամադրվող վարկերի ընդհանուր ծավալների և առանձին տեսակների առավելագույն չափերը.

զ/ սահմանում է Բանկի կողմից Մասնաճյուղի գործառնությունների վերահսկողության և հսկողության կարգը.

է/ իրականացնում է օրենքով և (կամ) Բանկի կանոնադրությամբ վերապահված այլ իրավասություններ:

4.2. Գործադիր տնօրենը՝

ա/ աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Մասնաճյուղի ղեկավարներին.

բ/ Մասնաճյուղի կառավարչի ներկայացմամբ աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Մասնաճյուղի աշխատողներին.

գ/ քննարկում և Բանկի խորհրդի նախնական հաստատմանն է ներկայացնում Մասնաճյուղի տարեկան հաշվետվությունները, եկամուտների ու ծախսերի նախահաշվի կատարողականը և տնտեսական գործունեության հաշվետվությունը.

դ/ Բանկի խորհրդի հաստատմանն է ներկայացնում Մասնաճյուղի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը, աշխատատեղերը (հաստիքացուցակը) և տարեկան եկամուտների ու ծախսերի նախահաշիվը.

ե/ Բանկի խորհրդի կողմից սահմանված կարգով և պարբերականությամբ գնահատականներ է ներկայացնում խորհրդին՝ Մասնաճյուղի տնտեսական գործունեության արդյունքների մասին.

զ/ ապահովում է Մասնաճյուղի գործառնությունների վերահսկողության իրականացումը, այդ թվում՝ վարկերի առավելագույն սահմանաչափերի պահպանումը.

է/ իրականացնում է օրենքով և (կամ) Բանկի կանոնադրությամբ վերապահված այլ իրավասություններ:

4.3. Մասնաճյուղի կառավարիչը՝

ա/ Բանկի անունից, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ձևերով պայմանագրեր է կնքում սույն կանոնադրության 2.2 կետի ա/-ե/, է/ և ը/ ենթակետերով նախատեսված ֆինանսական գործառնությունների կատարման համար, իսկ սույն կանոնադրության 2.3 և 2.4 կետերում նշված գործառնությունների համար Գործադիր տնօրենի գրավոր թույլտվությամբ.

բ/ ապահովում է Մասնաճյուղի կողմից ֆինանսական գործառնությունների կատարումը Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգերին և սահմանաչափերին համապատասխան.

գ/ կազմակերպում և հսկում է Մասնաճյուղի աշխատողների աշխատանքն ու ապահովում է Մասնաճյուղի գործառնական ու հսկողական համակարգի համապատասխանությունը Բանկի ներքին իրավական ակտերին.

դ/ մշակում և Գործադիր տնօրենին է ներկայացնում Մասնաճյուղի զարգացման ծրագրի, տարեկան եկամուտների ու ծախսերի նախահաշվի, աշխատատեղերի, ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և Մասնաճյուղի գործունեության այլ հարցերի վերաբերյալ առաջարկություններ ու նախագծեր, մասնակցում է Բանկում դրանց քննարկմանը.

ե/ ապահովում է Բանկի աշխատանքային ներքին կանոնակարգի, աշխատողների մասնագիտական վարքագծի կանոնների պահանջների պահպանումը Մասնաճյուղի աշխատողների կողմից.

զ/ ապահովում է Մասնաճյուղի առօրյա գործունեության օպերատիվությունը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում աշխատողների գործառնության պարտականությունների վերաբաշխումը.

է/ միջոցառումներ է ձեռնարկում Մասնաճյուղի աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման և ունակությունների զարգացման ուղղությամբ.

ը/ հսկողություն է իրականացնում աշխատանքային և կատարողական կարգապահության նկատմամբ, այդ թվում՝ Գործադիր տնօրենին առաջարկություններ է ներկայացնում աշխատողների խրախուսման կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին.

թ/ ապահովում է Մասնաճյուղում գտնվող գույքի և միջոցների պահպանումը, կրում է պատասխանատվություն (գործառնական սպասարկման բաժնի ղեկավարի և դրամարկղի վարիչի (գանձապահի) հետ միասին) դրանց պահպանման և դրամարկղային գործառնությունների ճիշտ կազմակերպման ու կատարման համար.

ժ/ գործառնական սպասարկման բաժնի ղեկավարի հետ միասին ապահովում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և դրա հիման վրա ՀՀ կենտրոնական բանկի ու Բանկի ընդունած իրավական ակտերի պահանջների կատարումը.

ժա/ Բանկի գլխավոր հաշվապահի հետ միասին ապահովում է Մասնաճյուղի հաշվետվությունների կազմումը և դրանք ներկայացնում է Գործադիր տնօրենին.

ժբ/ Բանկի շահերը ներկայացնում է պետական, դատական մարմիններում, հասարակական և այլ կազմակերպություններում, կնքում է սույն կանոնադրության 4.3 կետի ա/ ենթակետով չսահմանված քաղաքացիաիրավական, այդ թվում՝ տնտեսական բնույթի պայմանագրեր, յուրաքանչյուր դեպքի համար Գործադիր տնօրենի կողմից տրված լիազորագրի համաձայն.

ժգ/ ապահովում է Մասնաճյուղի շահութաբեր աշխատանքը, ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխումը.

ժդ/ Գործադիր տնօրենին է ներկայացնում Մասնաճյուղում աշխատանքի ընդունվող անձանց.

ժե/ կատարում է Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնության պարտականություններ:

4.4. Մասնաճյուղի կառավարչի բացակայության դեպքում, վերջինիս պարտականությունները կատարում է մասնաճյուղի կառավարչի տեղակալը կամ համապատասխան որակավորում ունեցող Բանկի այլ աշխատողը:

5. Հաշվառում և հաշվետվություն

5.1. Մասնաճյուղի գործունեության հաշվառումն իրականացվում է Բանկի հաշվապահական հաշվառման վարչության կողմից՝ ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ հաստատված «ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանին» և ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

5.2. Մասնաճյուղի գործունեության արդյունքներն ավտոմատ կերպով արտացոլվում են Բանկի հաշվեկշռում և հաշվետվություններում, որոնք ներկայացվում են ՀՀ կենտրոնական բանկ՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

5.3. Բանկի հաշվապահական հաշվառման համակարգում առանձնացված ձևավորվում է Մասնաճյուղի հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի հաշվետվությունը և Մասնաճյուղի գործունեության վերլուծության ու գնահատման համար անհարժեշտ այլ տեղեկատվություն:

5.4. Մասնաճյուղի ֆինանսական տարին սկսվում է հունվարի 01-ին և ավարտվում է դեկտեմբերի 31-ին:

6. Վերստուգում և վերահսկում

6.1. Մասնաճյուղի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության վերստուգումը կատարվում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից:

6.2. Մասնաճյուղում կարող են կատարվել նպատակային ստուգումներ՝ Բանկի կառավարման մարմինների որոշումներով:

6.3. Մասնաճյուղի գործունեության վերստուգում և վերահսկում կարող է կատարվել նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

6.4. Մասնաճյուղի ֆինանսական գործառնությունների փաստաթղթավորման, կատարման և Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխանության հսկողությունը կատարվում է իրական ժամանակի ռեժիմում Բանկի գլխավոր հաշվապահի (տեղակալի) կողմից:

6.5. Մասնաճյուղի վարչական և տնտեսական ծախսերի նախահաշվի պահպանման, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի առաջացման և մարման հսկողությունը կատարվում է Բանկի հաշվապահական հաշվառման վարչության կողմից:

7. Մասնաճյուղի գործունեության դադարեցումը

7.1. Մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցումը կատարվում է Բանկի խորհրդի որոշումով և ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:

7.2. Մասնաճյուղի գործունեությունը դադարեցվում է Բանկի խորհրդի որոշումով և ՀՀ կենտրոնական բանկի գրանցումով, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ կարգով:

7.3. Գործունեությունը դադարեցված Մասնաճյուղի գույքը հանձնվում է Բանկին:

7.4. Մասնաճյուղի գործունեության դադարեցման մասին հայտարարությունը տեղակայվում է ինտերնետում՝ Բանկի տնային էջում և հրապարակվում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում: